ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ

Երևան-0010, Հանրապետության հր. Կառավարական տուն 3

"30" Նոյեմբերի 2026թ. N 839-Ա

ՀՐԱՄԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԱՎՏՈՄՈԲԻԼԱՅԻՆ ՏՐԱՆՍՊՈՐՏՈՎ ԿԱՆՈՆԱՎՈՐ ՈՒՂԵՎՈՐԱՓՈԽԱԴՐՈՒՄՆԵՐՆ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2026 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 19-Ի ԹԻՎ 7 ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի դեկտեմբերի 3-ի N 1994-Ն որոշմամբ հաստատված հավելվածի 9-րդ կետի 6-րդ ենթակետի և Հայաստանի Հանրապետության վարչապետի 2019 թվականի հունիսի 1-ի N 659-Լ որոշմամբ հաստատված հավելվածի 19-րդ կետի 20-րդ ենթակետի պահանջներով՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1. Հաստատել Հայաստանի Հանրապետությունում ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային տրանսպորտով կանոնավոր ուղևորափոխադրումներն իրականացնող կազմակերպությունների ընտրության մրցութային հանձնաժողովի 2026 թվականի մարտի 19-ի թիվ 7 արձանագրությունը՝ համաձայն հավելվածի:

2. Սույն հրամանի կատարման նկատմամբ հսկողությունը վերապահել Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության համապատասխան ոլորտը համակարգող նախարարի տեղակալին:

3/30/2026

X

ԴԱՎԻԹ ԽՈՒԴԱԹՅԱՆ

ՆԱԽԱՐԱՐ՝ Signed by: KHUDATYAN DAVIT 1308910274 Դ. ԽՈՒԴԱԹՅԱՆ

ք. Երևան

Հավելված
ՀՀ տարածքային կառավարման և
ենթակառուցվածքների նախարարի
« » _____ 2026թ.
N _____ հրամանի

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 7

Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության Հայաստանի Հանրապետությունում ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային տրանսպորտով ուղևորների կանոնավոր փոխադրումներ իրականացնող կազմակերպությունների ընտրության մրցութային հանձնաժողովի նիստի

19.03.2026թ. ք. Երևան

2026թ. մարտի 19-ին ժամը 11:00-ին կայացավ Հայաստանի Հանրապետությունում ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային տրանսպորտով ուղևորների կանոնավոր փոխադրումներ իրականացնող կազմակերպությունների ընտրության ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության մրցութային հանձնաժողովի հատուկ նիստ:

Մասնակցում էին հանձնաժողովի
նախագահ՝ Ա. Սիմոնյանը
քարտուղար՝ Պ. Գալստյանը
անդամներ՝ Տ. Գասպարյանը
Ա. Խաչատրյանը
Կ. Մկրտչյանը

Օրակարգում՝

1. «Գյումրի-Ողջի-Մեղրաշատ-Բյուրակն» թիվ 07-058 երթուղին սպասարկելու իրավունքը ժամանակավոր ստանալու համար ներկայացված փաթեթի բացում:

Քննարկվեց՝

1. «Գյումրի-Ողջի-Մեղրաշատ-Բյուրակն» թիվ 07-058 երթուղին սպասարկելու իրավունքը ժամանակավոր ստանալու համար ներկայացված հայտի համապատասխանության հարցը՝ ՀՀ կառավարության 03.12.2020 թ. թիվ 1994-Ն որոշմամբ հաստատված կարգի պահանջներին:

Արձանագրվեց՝

1. «Գյումրի-Ողջի-Մեղրաշատ-Բյուրական» թիվ 07-058 երթուղին սպասարկելու իրավունքը ժամանակավոր ստանալու համար ներկայացվել է մեկ հայտ՝ «Մուշ-Արմեն» ՍՊ ընկերության կողմից:

2.1 «Մուշ-Արմեն» ՍՊ ընկերության կողմից ներկայացված փաթեթում թերություններ չեն հայտնաբերվել:

Մրցութային հանձնաժողովի

նախագահ՝ Ա. Սիմոնյան

քարտուղար՝ Պ. Գալստյան

անդամներ՝ Տ. Գասպարյան

Ա. Խաչատրյան

Կ. Մկրտչյան